

L.A. Care Cal MediConnect Plan *(Medicare-Medicaid Plan)*

2018

Ատամնաբուժական
նպաստների ուղեցույց



LIBERTY Dental Plan of California, Inc.

L.A. Care Health Plan-ն առողջապահական մի ծրագիր է, որը պայմանագիր է կնքել և՛ Medicare-ի, և՛ Medi-Cal-ի հետ՝ երկու ծրագրերի նպաստներն իր անդամներին տրամադրելու համար: Ի լրումն Medicare և Medi-Cal նպաստների, L.A. Care Health Plan-ն առաջարկում է ատամնաբուժական նպաստներ իր Cal MediConnect Plan անդամներին: LIBERTY Dental Plan-ը տրամադրում է ձեր ատամնաբուժական նպաստները L.A. Care Health Plan-ի հետ ունեցած պայմանագրի միջոցով: Ատամնաբուժական նպաստների այս գրքույկը լրացնում է ձեր L.A. Care Cal MediConnect Plan *Անդամի տեղեկագիրքը*: Այս գրքույկը կօգնի ձեզ այն տեղեկատվությամբ, որը պետք է իմանաք ձեր ատամնաբուժական ծրագրի մասին: Այն բացատրում է՝ ինչպես է այն գործում և L.A. Care Cal MediConnect Plan-ի ատամնաբուժական նպաստները:

Այս գրքույկը պարունակում է ապահովագրված ատամնաբուժական ծառայությունների ցուցակը, ծրագրի սահմանափակումները և չապահովագրված ծառայությունները: Դուք պետք է նաև կարդաք ձեր L.A. Care Cal MediConnect Plan *Անդամի տեղեկագիրքը* լրացուցիչ տեղեկությունների համար ձեր նպաստների ու ապահովագրման մասին, ներառյալ՝ լրացուցիչ ատամնաբուժական նպաստները: Ձեր նպաստների համակարգմանն աջակցելու համար այս գրքույկը պարունակում է ծառայությունների ցուցակ, որոնք առաջարկվում են Կալիֆորնիա նահանգի կողմից Denti-Cal ու Կանխավճարված առողջապահական ծրագրի (Prepaid Health Plan, PHP) անդամների համար:

L.A. Care Health Plan-ն առողջապահական ծրագիր է, որը պայմանագիր է կնքել և՛ Medicare-ի, և՛ Medi-Cal-ի հետ՝ երկու ծրագրերի նպաստներն անդամագրված անձանց տրամադրելու համար:

Այս տեղեկատվությունը կարող եք անվճար ստանալ այլ ձևաչափով, ինչպես օրինակ՝ խոշոր տառատեսակով, Բրեյլի այբուբենով և/կամ ձայնագրությամբ: Չանգահարեք **1-888-522-1298** (TTY՝ 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոն օրերը: Հեռախոսազանգն անվճար է:

L.A. Care Health Plan-ը ենթարկվում է կիրառելի դաշնային քաղաքացիական իրավունքների օրենքներին և խտրականություն չի դրսևորում՝ ռասայի, մաշկի գույնի, ազգային ծագման, տարիքի, հաշմանդամության կամ սեռի հիման վրա:

If you speak English, language assistance services, free of charge, are available to you. Call 1-888-522-1298 (TTY: 711), 24 hours a day, 7 days a week, including holidays. The call is free.

Si usted habla español, los servicios de asistencia con el idioma estarán disponibles para usted sin costo. Llame al **1-888-522-1298** (TTY: 711), las 24 horas del día, los 7 días de la semana, incluso los días festivos. La llamada es gratuita.

如果您說中文，您可免費獲得語言協助服務。請致電 **1-888-522-1298** (TTY: 711)，服務時間為每週 7 天，每天 24 小時（包含假日）。這是免費電話。

Nếu quý vị nói Tiếng Việt, hiện có các dịch vụ hỗ trợ ngôn ngữ miễn phí cho quý vị. Gọi **1-888-522-1298** (TTY: 711), 24 giờ một ngày, 7 ngày một tuần, kể cả các ngày lễ. Cuộc gọi là miễn phí.

한국어를 사용하실 경우 언어지원서비스를 무료로 이용하실 수 있습니다. 연중무휴로 이용할 수 있는 **1-888-522-1298** (TTY: 711) 번으로 전화하십시오. 통화료는 무료입니다.

Եթե խոսում եք հայերեն, լեզվական աջակցության ծառայությունները հասանելի են Ձեզ անվճար: Չանգահարեք **1-888-522-1298** հեռախոսահամարով (TTY՝ 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոն օրերը: Հեռախոսազանգն անվճար է:

إذا كنت تتحدث اللغة العربية، فإن خدمات المساعدة اللغوية، متوفرة لك، مجاناً. اتصل على **1-888-522-1298** (TTY: 711) 24 ساعة في اليوم و7 أيام في الأسبوع، بما في ذلك أيام العطلات. هذه المكالمات مجانية.

Если вы говорите по-русски, вы можете воспользоваться бесплатными услугами переводчика. Звоните по телефону **1-888-522-1298** (TTY: 711), круглосуточно, без выходных, включая праздничные дни. Звонок бесплатный.

日本語のサービスを無料でご利用いただけます。**1-888-522-1298** (TTY: 711) までお電話ください。このサービスは年中無休(祝祭日を含む)でご利用いただけます。通話料は無料です。

اگر به زبان فارسی صحبت می کنید، خدمات کمک در زمینه زبان بطور رایگان در اختیار شما قرار دارد. می توانید در تمام 24 ساعت شبانه روز و 7 روز هفته، حتی روزهای تعطیل با **1-888-522-1298** (TTY: 711) تماس بگیرید. تماس رایگان می باشد.

अगर आप हिंदी बोलते हैं, तो मुफ्त में भाषा सहायता सेवाएं, आपके लिए उपलब्ध हैं। अवकाश के दिनों समेत, दिन के 24 घंटे, सप्ताह के 7 दिन **1-888-522-1298** (TTY: 711) पर कॉल करें। कॉल निःशुल्क है।

បើអ្នកនិយាយភាសា ខ្មែរ, សេវាជំនួយផ្នែកភាសា គ្មានបង់ថ្លៃ គឺមានស្រាប់ជួយអ្នក។ សូមទូរស័ព្ទទៅ **1-888-522-1298** (TTY: 711), 24 ម៉ោងក្នុងមួយថ្ងៃ 7 ថ្ងៃក្នុងមួយសប្តាហ៍រួមទាំងថ្ងៃឈប់ស្រមាក។ ការហៅទូរស័ព្ទនេះគឺមិនគិតថ្លៃទេ។

Kung nagsasalita ka ng Tagalog, magagamit mo ang mga serbisyo ng tulong sa wika nang walang bayad. Tumawag sa **1-888-522-1298** (TTY: 711), 24 na oras sa isang araw, 7 araw sa isang linggo, kabilang ang mga piyesta opisyal. Libre ang pagtawag.

หากท่านพูดภาษาไทย เรามีบริการช่วยเหลือด้านภาษาให้คุณโดยไม่เสียค่าใช้จ่าย โปรดโทรฟรี ที่หมายเลข **1-888-522-1298** (TTY: 711) ได้ตลอด 24 ชั่วโมง ทุกวัน ไม่เว้นวันหยุด

ຖ້າວ່າ ທ່ານເວົ້າພາສາລາວ, ມີບໍລິການຊ່ວຍເຫຼືອດ້ານພາສາໃຫ້ທ່ານໂດຍບໍ່ເສັຍຄ່າ. ໂທ **1-888-522-1298** (TTY: 711), ໄດ້ຕະຫຼອດ 24 ຊົ່ວໂມງ, 7 ວັນຕໍ່ອາທິດ, ລວມເຖິງ ວັນພັກຕ່າງໆ. ເບີໂທນີ້ແມ່ນບໍ່ເສັຍຄ່າ.

Yog koj hais lus Hmoob, muaj kev pab txhais lus pub dawb rau koj, hu rau **1-888-522-1298** (TTY: 711), 24 teev zhauv ib hnuv, 7 hnuv hauv ib asthiv, suav nrog cov hnuv so tib si. Qhov hu no yog hu dawb xwb.

जे उर्मी पंजाबी बोलते है, उां उराउ लयी मुदउ उाभा मराठिउा मेरादां उिपलघय रन। हुँटी दाले दिनं समेउ 24 षंटे, 7 दिन **1-888-522-1298** (TTY: 711) 'उे बाल बरोबाल मुदउ री।

Ոչ խտրականության հայտարարություն խոշոր չափսի նշանակալի հրատարակությունների և նշանակալի հաղորդակցությունների համար

L.A. Care Health Plan-ը հետևում է կիրառելի դաշնային քաղաքացիական իրավունքների օրենքներին և խտրականություն չի դրսևորում՝ ռասայի, մաշկի գույնի, ազգային ծագման, տարիքի, հաշմանդամության կամ սեռի հիման վրա: L.A. Care Health Plan-ը չի բացառում մարդկանց կամ նրանց նկատմամբ չի ցուցաբերում այլ վերաբերմունք՝ հիմնվելով ռասայի, մաշկի գույնի, ազգային ծագման, տարիքի, հաշմանդամության կամ սեռի վրա:

L.A. Care Health Plan-ը՝

- Մեզ հետ արդյունավետ հաղորդակցվելու նպատակով՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց տրամադրում է անվճար օգնության միջոցներ և ծառայություններ, ինչպես օրինակ՝
 - Խուլիհամրերի լեզվի որակավորված բանավոր թարգմանիչներ
 - Գրավոր տեղեկատվություն այլ ձևաչափերով (խոշոր տառատեսակ, ձայնագրություն, էլեկտրոնային մատչելի ձևաչափեր, այլ ձևաչափեր)
- Տրամադրում է անվճար լեզվական ծառայություններ այն մարդկանց, ում առաջնային լեզուն անգլերենը չէ, ինչպես օրինակ՝
 - Որակավորված բանավոր թարգմանիչներ
 - Գրավոր տեղեկատվություն այլ լեզուներով

Եթե օգնության կարիք ունեք, զանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ **1-888-522-1298** հեռախոսահամարով (TTY՝ **711**) համարով:

Եթե կարծում եք, որ L.A. Care Health Plan-ը չի տրամադրել այս ծառայությունները կամ որևէ այլ կերպ խտրականություն է դրսևորել՝ ռասայի, մաշկի գույնի, ազգային ծագման, տարիքի, հաշմանդամության կամ սեռի հիման վրա, ապա կարող եք բողոք ներկայացնել L.A. Care Health Plan-ի Քաղաքացիական իրավունքների համակարգիչի մոտ: Ունեք երկու ընտրանք բողոք/զանգատ ներկայացնելու համար՝

Կարող եք բողոքի/զանգատի համար զանգահարել

Անդամների սպասարկման բաժին՝ **1-888-522-1298** (TTY՝ **711**) համարով:

Կամ կարող եք գրավոր զանգատ ուղարկել այս հասցեով՝

Civil Rights Coordinator

c/o Compliance Department

L.A. Care Health Plan

1055 West 7th Street, 10th Floor

Los Angeles, CA 90017

Է-նամակ՝ civilrightscoordinator@lacare.org

Դուք կարող եք բողոք/զանգատ ներկայացնել անձամբ կամ փոստով, ֆաքսով կամ էլ. փոստով: Եթե բողոք ներկայացնելու հարցում օգնության կարիք ունեք, Քաղաքացիական իրավունքների համակարգողը պատրաստ է օգնել ձեզ Անդամների սպասարկման բաժնի միջոցով: Կարող եք նույնպես քաղաքացիական իրավունքի զանգատ ներկայացնել ԱՄՆ Առողջապահության և մարդու ծառայությունների նախարարության Քաղաքացիական իրավունքների գրասենյակ էլեկտրոնային միջոցով՝ Քաղաքացիական իրավունքների զանգատի պորտալի միջոցով, որը առկա է այստեղ՝ <https://ocrportal.hhs.gov/ocr/portal/lobby.jsf>, կամ փոստով կամ հեռախոսով՝

U.S. Department of Health and Human Services

200 Independence Avenue SW., Room 509F, HHH Building

Washington, DC 20201

1-800-368-1019, 800-537-7697 (TDD):

Գանգատի ձևերը գտնվում են <http://www.hhs.gov/ocr/office/file/index.html> կայքէջում:

Ի՞նչ է առաջնային խնամքի ատամնաբույժը:

Առաջնային խնամքի ատամնաբույժը կօգնի ձեր ատամնաբուժական խնամքի հարցերում, ներառյալ՝ մասնագետի մոտ ուղեգրի տրամադրում, եթե անհրաժեշտ է: Ձեզ նախօրոք լիազորում պետք է ձեր առաջնային խնամքի ատամնաբույժից ատամնաբուժական ծառայություններ ստանալու համար: Ձեր առաջնային խնամքի ատամնաբույժը կատարում է ապահովագրման որոշմների հիմնական մասը: Ապահովագրման որոշումները ստացվում են բերանի ստուգումների միջոցով, որոնք ապահովագրվում են LIBERTY Dental Plan-ի կողմից՝ որոշակի սահմանափակումներով: Ձեր առաջնային խնամքի ատամնաբույժը պատասխանատու է ձեզ տեղեկացնելու համար ձեր բերանի ստուգման արդյունքների մասին, ինչպես նաև ձեր նպաստների ու որևէ ծախսերի մասին:

Անպայման ասեք ձեր ատամնաբույժին, որ դուք L.A. Care Cal MediConnect Plan-ի անդամ եք, երբ զանգահարում եք ժամադրություն նշանակելու համար:

Ինչպե՞ս ընտրել ձեր առաջնային խնամքի ատամնաբույժին:

Դուք պետք է ընտրեք առաջնային խնամքի ատամնաբույժին LIBERTY Dental Plan-ից որևէ ատամնաբուժական ծառայությունների համար, որոնք ապահովագրված են L.A. Care Cal MediConnect Plan-ի կողմից: Եթե ատամնաբույժ չընտրեք անդամագրվելիս կամ նախքան ձեր ապահովագրման ամսաթիվը, ապա ձեզ համար ատամնաբույժ կնշանակվի: Ձեզ կարող են նշանակել LIBERTY Dental Plan-ի ցանցի որևէ ատամնաբույժ, որը նշված է Մատակարարների հասցեագրքում: Դուք կարող եք որոշել պահպանել ձեր ներկա ատամնաբույժին, եթե նա մասնակցում է LIBERTY Dental Plan-ին: Կամ կարող եք նոր առաջնային խնամքի ատամնաբույժ ընտրել:

Եթե դուք այցելում էիք ցանցից դուրս ատամնաբույժի, դուք պետք է խնդրեք, որ ձեզ ցանցի ատամնաբույժ նշանակեն: Երբ գտնեք առաջնային խնամքի ատամնաբույժ, գրի առեք նրա տվյալները ձեր անդամագրման ձևաթղթում կամ զանգահարեք LIBERTY Dental Plan-ի Անդամների սպասարկման բաժին նախքան ձեր ապահովագրման ամսաթիվը: Որոշ դեպքերում, երբ լիազորվում է L.A. Care Cal MediConnect Plan-ի կողմից, դուք կարող եք ծառայություններ ստանալ ցանցից դուրս մատակարարներից:

Դուք պետք է այցելեք ձեզ նշանակված LIBERTY Dental Plan-ի առաջնային խնամքի ատամնաբույժին ատամնաբուժական ծառայությունների համար, որոնք ապահովագրված են L.A. Care Cal MediConnect Plan-ի կողմից: Առաջնային խնամքի ատամնաբույժ գտնելու հարցում օգնության համար դիմեք LIBERTY Dental Plan-ի Անդամների սպասարկման բաժին՝ **1-888-700-5243** հեռախոսահամարով, ժամը 8:00 a.m.-ից 8:00 p.m.-ը (խաղաղօվկիանոսյան ժամանակով), երկուշաբթիից ուրբաթ օրերին: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն **711** համարով:

Ձեր առաջնային խնամքի ատամնաբույժին փոխելը

Դուք կարող եք փոխել ձեր առաջնային խնամքի ատամնաբույժին ցանկացած պահի: Եթե ցանկանում եք փոխել ձեր առաջնային խնամքի ատամնաբույժին, կարող եք զանգահարել LIBERTY Dental Plan-ի Անդամների սպասարկման բաժին: Եթե զանգահարեք մինչև ամսվա 20-րդ օրը, ձեր փոփոխությունն ուժի մեջ կմտնի հաջորդ ամսվա առաջին օրվանից: LIBERTY Dental Plan-ի Անդամների սպասարկման բաժինը կփոխի ձեր արձանագրությունը՝ ցույց տալու համար ձեր նոր առաջնային խնամքի ատամնաբույժի անունը, ու կասի ձեզ, թե երբ է ուժի մեջ մտնում այս փոփոխությունը: Առաջնային խնամքի ատամնաբույժ գտնելու հարցում օգնության համար դիմեք LIBERTY Dental Plan-ի Անդամների սպասարկման բաժին՝ **1-888-700-5243** հեռախոսահամարով, ժամը 8:00 a.m.-ից 8:00 p.m.-ը (խաղաղօվկիանոսյան ժամանակով), երկուշաբթիից ուրբաթ օրերին: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն **711** համարով:

Ի՞նչ պետք է անեք, եթե հաշիվներ ունեք ցանցից դուրս մատակարարներից, որոնք կարծում եք պետք է վճարվեն LIBERTY Dental Plan-ի կողմից:

Եթե հաշիվ եք ստանում ցանցից դուրս մատակարարից ատամնաբուժական խնամքի համար, չպետք է վճարեք այդ հաշիվը: Ուղարկեք հաշիվը՝ ստացված ծառայության մասին տվյալներով, LIBERTY Dental Plan-ին մշակման համար:

Մենք կտեղեկացնենք ձեզ, եթե պետք է վճարեք հաշվի որևէ մասը: Եթե համաձայն չեք, որ պետք է վճարեք ձեր ծառայությունների համար, խնդրում ենք կարդալ ձեր *Անդամի տեղեկագիրքը*՝ բողոքարկում կամ գանգատ ներկայացնելու մասին մանրամասների համար:

Ո՞րն է LIBERTY Dental Plan-ի սպասարկման տարածքը:

LIBERTY Dental Plan-ը սպասարկում է ողջ Լոս Անջելես վարչաշրջանը, բացի 90704 փոստային կոդից:

Անհրաժեշտ է արդյո՞ք նպաստի նախօրոք լիազորում:

Եթե ձեզ մասնագետի խնամք է հարկավոր, ձեր ատամնաբույժը պետք է նախօրոք լիազորման խնդրանք ուղարկի LIBERTY Dental Plan-ին: LIBERTY Dental Plan-ը կպատասխանի խնդրանքին ձևաթուղթը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում, եթե իհարկե դա արտակարգ իրավիճակ չէ:

Եթե ձեր ատամնաբույժը համարում է, որ ձեր առողջությանը հրատապ կամ լուրջ վտանգ է սպառնում, կամ որոշմանը սպասելու Նորմալ ժամանակահատվածը կարող է վնասել ձեր կյանքին կամ առողջությանը, ապա ուղեգրի խնդրանքը չի գերազանցի 72 ժամ: Որոշումը կտրվի ձեր առաջնային խնամքի ատամնաբույժին 24 ժամվա ընթացքում: Որոշ դեպքերում որոշումը կտրվի անդամին տեղեկությունը ստանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում: Եթե ձեր ծառայությունը լիազորվում է, դուք փոխհատուցում կստանաք տեղեկությունը ստանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

Բոլոր ատամնաբուժական նպաստներն ապահովագրվում են, միայն եթե տրամադրվում են LIBERTY Dental Plan-ի պայմանագրային առաջնային խնամքի ատամնաբույժի կամ մասնագետի կողմից: Դուք պետք է դիմեք LIBERTY Dental Plan-ի մատակարարներին, բացառությամբ անհետաձգելի դեպքերի: Միակ դեպքը, երբ կարող եք ցանցից դուրս խնամք ստանալ, դա արտակարգ իրավիճակներում է, ինչպես նկարագրված է այս գրքուկի **Շտապ ատամնաբուժական խնամք** հատվածում:

Շտապ ատամնաբուժական խնամք

LIBERTY Dental Plan-ի առաջնային խնամքի ատամնաբույժները կարող են շտապ ատամնաբուժական ծառայություններ տրամադրել օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

Եթե ձեզ անհրաժեշտ է շտապ ատամնաբուժական խնամք, դիմեք ձեր առաջնային խնամքի ատամնաբույժին ժամադրություն նշանակելու համար:

Եթե չեք կարող կապվել ձեր առաջնային խնամքի ատամնաբույժի հետ շտապ ատամնաբուժական ծառայությունների համար, որոնք պահանջվում են աշխատանքային ժամերից հետո կամ հանգստյան օրերին, խնդրում ենք դիմել LIBERTY Dental Plan-ի Անդամների սպասարկման բաժնի՝ **1-888-700-5243** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY-ից օգտվողները պետք է գանգահարեն **711** համարով:

Տարածքից դուրս շտապ ատամնաբուժական ծառայություն

Եթե ունեք տարածքից դուրս արտակարգ իրավիճակ Միացյալ Նահանգներում, դիմեք ցանկացած վկայագրված ատամնաբույժի խնամքի համար: LIBERTY Dental-ը կփոխհատուցի մինչև \$75 որակավորվող շտապ ատամնաբուժական ծախսերի համար:

Ծրագիրն ապահովագրում է տրամադրում տարածքից դուրս շտապ ատամնաբուժական ծառայությունների համար, միայն եթե այդ ծառայությունները պահանջվում են ուժեղ ցավ կամ արյունահոսություն դադարեցնելու համար, կամ եթե անդամը ողջամտորեն հավատում է, որ եթե վիճակը չախտորոշվի կամ չբուժվի, այն կարող է հանգեցնել հաշմանդամության, անկարողության և/կամ մշտական վնասի ձեր առողջությանը կամ մահվան պատճառ հանդիսանալ:

Տարածքից դուրս շտապ ատամնաբուժական ծառայությունն ու խնամքը, որն ապահովագրվում է LIBERTY Dental Plan-ի կողմից, ներառում է ատամնաբուժական զննումներ, ստուգումներ ու ստուգում ատամնաբույժի կամ ատամնաբուժական մասնագետի կողմից: Ատամնաբույժը կտեղեկացնի ձեզ, եթե առկա է շտապ ատամնաբուժական վիճակ, ինչպես նաև ատամնաբուժական գրասենյակում կտրամադրի ձեզ անհրաժեշտ խնամքն արտակարգ ախտանիշները թեթևացնելու համար: Այլ տեսակի արտակարգ իրավիճակները չեն ապահովագրվում LIBERTY Dental Plan-ի կողմից, եթե ծառայությունները մատուցվել են հիվանդանոցում ու ապահովագրված են բժշկական ծրագրի կողմից: LIBERTY Dental Plan-ը կորոշի, եթե ծառայություններն ատամնաբուժական բնույթի էին:

Տարածքից դուրս շտապ ատամնաբուժական խնամքի համար փոխհատուցում

Եթե անհրաժեշտ է շտապ ատամնաբուժական խնամք, LIBERTY Dental Plan-ը կապահովագրի մինչև \$75 ծառայությունների համար յուրաքանչյուր տարի: Եթե վճարել եք շտապ ատամնաբուժական խնամքի հաշվի համար, ուղարկեք վճարված հաշվի պատճենը ներոնշյալ հասցեով՝

LIBERTY Dental Plan
Attn: Claims Department
P.O. Box 26110
Santa Ana, CA 92799-6110

Խնդրում ենք ներառել մատակարարի գրասենյակի հայցի պատճենը կամ դյուրընթեռնելի անդորրագիր/ծառայությունների հայտարարագիր: Ուղարկեք ձեր պատճենը կամ հայտարարագիրը LIBERTY Dental Plan հետևյալ տեղեկություններով՝

- Ձեր անդամակցության տվյալները
- Շտապ օգնության խնամք ստացած անձի անունը
- Շտապ ատամնաբուժական խնամք տրամադրող ատամնաբույժի անունն ու հասցեն
- Շտապ այցը բացատրող հայտարարագիր

Եթե լրացուցիչ տեղեկություններ պահանջվեն, ձեզ կտեղեկացնեն գրավոր կերպով: Եթե ձեր հայցը հաստատվի, դուք փոխհատուցում կստանաք 30 օրացուցային օրվա ընթացքում: Եթե ձեր հայցի ինչ-որ մաս չի հաստատվում, դուք նպաստների գրավոր բացատրություն կստանաք (Explanation of Benefits, EOB) LIBERTY Dental Plan-ից ձեր հայցը ստանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում: EOB-ն կպարունակի հետևյալ տեղեկությունները՝

- Հայցի մերժման պատճառը:
- Ատամնաբուժական նպաստների տեղեկությունների գրքույկի համապատասխան դրույթի հոդումը, որի հիման վրա այն մերժվել է:
- Տեղեկություններ մերժման մասին կրկին որոշում կայացնելու խնդրանքի ձեր իրավունքների մասին ու բողոք ներկայացնելու գործընթացի մասին:

Երկրորդ կարծիք

Կարող եք ձեզ համար անվճար ատամնաբուժական երկրորդ կարծիք խնդրել՝ զանգահարելով LIBERTY Dental Plan-ի Անդամների սպասարկման բաժին՝ 1-888-700-5243 հեռախոսահամարով, TTY օգտագործողները պետք է զանգահարեն 711, կամ գրելով՝

LIBERTY Dental Plan
P.O. Box 26110
Santa Ana, CA 92799-6110

Ձեր առաջնային ինսամբի ատամնաբույժը նույնպես կարող է ատամնաբուժական երկրորդ կարծիք խնդրել ձեր անունից: Ատամնաբուժական երկրորդ կարծիքի բոլոր խնդրանքները վերանայվում են LIBERTY Dental Plan-ի կողմից խնդրանքի ստացման պահից հինգ օրվա ընթացքում: Երբ այն հաստատվի, LIBERTY Dental Plan-ը կկազմակերպի ատամնաբուժական երկրորդ կարծիքի ստացումն ու կտեղեկացնի ատամնաբույժին ձեր մտահոգությունների մասին: Ձեզ կտեղեկացնեն այդ մասին, որպեսզի կարողանաք ժամադրություն նշանակել:

Ինչ անել, եթե ես խնդիր կամ զանգատ ունեմ

Կարող եք ապահովագրման որոշում խնդրել կամ բողոքարկել կամ զանգատ ներկայացնել ձեր ատամնաբուժական ինսամբի վերաբերյալ: Կարող եք զանգահարել L.A. Care Cal MediConnect Plan-ի Անդամների սպասարկման բաժին՝ 1-888-522-1298 հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոն օրերը կամ կարդալ ձեր L.A. Care Cal MediConnect Plan *Անդամի տեղեկագիրքը*: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 711 համարով:

Չաճախակի տրվող հարցերի պատասխաններ

Ծրագիրն ունի՞ ատամնաբուժական մասնագետներ:

Այո: LIBERTY Dental Plan-ն ունի ատամնաբուժական մասնագետների ցանց: Եթե հարկավոր է մասնագիտական ինսամբ, ձեզ կուղարկեն մասնագետի մոտ՝ ձեր կարիքները ձեր առաջնային ինսամբի բժշկի հետ համակարգելուց հետո:

Ինչպե՞ս եմ իմանալու իմ համավճարի չափը:

Ապահովագրված ծառայությունների համար համավճարներ չկան: Եթե որևէ հարցեր ունեք, հարցրեք ձեր ատամնաբույժին նախքան ատամնաբուժական ինսամբ ստանալը և/կամ զանգահարեք LIBERTY Dental Plan-ի Անդամների սպասարկման բաժին:

Իսկ եթե՞ հարց ունեմ իմ ատամնաբուժական ծրագրի մասին:

Չանգահարեք LIBERTY Dental Plan-ի Անդամների սպասարկման բաժին՝ 1-888-700-5243 հեռախոսահամարով, ժամը 8:00 a.m.-ից 8:00 p.m.-ը (խաղաղօվկիանոսյան ժամանակով), երկուշաբթիից ուրբաթ օրերին: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 711 համարով: LIBERTY Dental Plan-ի Անդամների սպասարկման բաժնի ներկայացուցիչն ուրախությամբ կօգնի ձեզ պատասխանել ձեր ունեցած որևէ հարցերին:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆ. սկսած 2018թ. հունվարի 1-ից՝ չափահասների Denti-Cal նպաստները լիովին վերականգնվել են և ներառում են ավելի շատ ապահովագրված ծառայություններ: LIBERTY Dental Plan-ի լրացուցիչ ծառայությունները կլինեն ձեր ատամնաբուժական ապահովագրման առաջնային աղբյուրը, իսկ Denti-Cal ծառայությունները կլինեն ձեր ապահովագրման երկրորդական աղբյուրը: viii-xii էջերը պարունակում են ուղեցույցներ, սահմանափակումներ և ծառայություններ՝ ապահովագրված LIBERTY Dental Plan-ի կողմից: xiii-xxv էջերը պարունակում են ուղեցույցներ, սահմանափակումներ և ծառայություններ՝ ապահովագրված Dent-Cal-ի կողմից:

Յետևյալ նպաստներն ապահովագրվում են, երբ տրամադրվում են ցանցի ներսում LIBERTY Dental Plan-ի ցանցի մատակարարի կողմից: Կիրառելի են վերևում նշված բոլոր կանոնները, ներառյալ՝ առաջնային խնամքի ատամնաբույժի նշանակում, ուղեգիր մասնագետի մոտ և նախօրոք լիազորման պահանջները.

CDT Կոդ	Նկարագիր	Համավճար
ԱՆՏՈՐՈՇՈՄ		
D0140	Բերանի սահմանափակ գնահատում	\$0
D0180	Համակողմանի պերիոդոնտային գնահատում	\$0
D0240	Ներբերանային, օկկլյուզիային թաղանթ	\$0
D0273	Կծովոլ ռենտգենային ժապավեն, 3 թաղանթ	\$0
ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ		
D1310	Սննդային խորհրդատվություն ատամնաբուժական հիվանդության վերահսկման համար	\$0
D1320	Ծխախոտի խորհրդատվություն բերանի խոռոչի հիվանդության վերահսկման/կանխման համար	\$0
D1330	Բերանի հիգիենայի ցուցումներ	\$0
ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ		
D2720	Ատամնապսակ, խեժ՝ բարձր ազնվության մետաղով	\$0*
D2721	Ատամնապսակ, խեժ՝ հատուկ բազային մետաղով	\$0
D2722	Ատամնապսակ, խեժ՝ ազնիվ մետաղով	\$0*
D2750	Ատամնապսակ, ճենապակի՝ միաձուլված բարձր ազնվության մետաղին	\$0*
D2751	Ատամնապսակ, ճենապակի՝ միաձուլված հատուկ բազային մետաղին	\$0
D2752	Ատամնապսակ, ճենապակի՝ միաձուլված ազնիվ մետաղին	\$0*
D2790	Ատամնապսակ, լրիվ ձուլված բարձր ազնվության մետաղ	\$0*
D2791	Ատամնապսակ, լրիվ ձուլված հատուկ բազային մետաղ	\$0
D2792	Ատամնապսակ, լրիվ ձուլված ազնիվ մետաղ	\$0*
D2933	Հավաքովի չժանգոտվող պողպատից պսակ՝ խեժի պատուհանով	\$0
D2950	Արմատային պաշտպանական ներդիր, այդ թվում՝ գնդասեղներ	\$0
D2951	Գնդասեղի պահում, մեկ ատամի համար՝ ի լրումն վերականգնման	\$0
D2953	Յուրաքանչյուր լրացուցիչ անուղղակիորեն պատրաստված շտիֆտ՝ նույն ատամի համար	\$0*
ԷՆԴՈՂՈՆՏԻԿ		
D3110	Պուլպայի ծածկիչ, ուղղակի (վերջնական վերականգնումը բացառված է)	\$0
D3120	Պուլպայի ծածկիչ, անուղղակի (վերջնական վերականգնումը բացառված է)	\$0
D3320	Փոքր աղորիք ատամ (վերջնական վերականգնումը բացառված է)	\$0

CDT Կոդ	Նկարագիր	Համավճար
ԷՆԴՈՂՈՆՏԻԿ (շարունակություն)		
D3330	Մեծ աղորիք ատամ (վերջնական վերականգնումը բացառված է)	\$0
D3331	Արմատային խողովակի արգելքի բուժում, ոչ վիրաբուժական	\$0
D3332	Անավարտ Էնդոդոնտիկ թերապիա, չվերականգնվող	\$0
D3347	Նախկին արմատային խողովակի կրկնակի բժշկում, փոքր աղորիք ատամ	\$0
D3348	Նախկին արմատային խողովակի կրկնակի բժշկում, մեծ աղորիք ատամ	\$0
D3410	Ապիկտոմիա/պերիռադիկուլար վիրահատություն, առջևի	\$0
D3421	Ապիկտոմիա/պերիռադիկուլար վիրահատություն, փոքր աղորիք ատամ	\$0
D3425	Ապիկտոմիա/պերիռադիկուլար վիրահատություն, մեծ աղորիք ատամ	\$0
D3426	Ապիկտոմիա/պերիռադիկուլար վիրահատություն, յուրաքանչյուր լրացուցիչ արմատ	\$0
ՊԵՐԻՂՈՆՏԻԿ		
D4341	Պերիոդոնտալ չափազանցում և արմատի քերում, 4+ ատամ/բվադրանտ	\$0
D4342	Պերիոդոնտալ չափազանցում և արմատի քերում, 1-3 ատամ/բվադրանտ	\$0
D4355	Ամբողջ բերանի վիրաբուժական մշակում (հեռացնում է գոյացումները ատամների շուրջ, լնդերի տակ)	\$0
D4381	Հակամանրեային ազենտների տեղային առաքում/ամեն ատամ	\$0
D4910	Պերիոդոնտալ պահպանման աշխատանք	\$0
D4999	Չնշված պերիոդոնտալ ընթացակարգ, ըստ զեկուլյցի	\$0
ՀՆՆՈՎԻ ՊՐՈԹԵԶՎՈՐՈՒՄ (ատամնաշարի պրոթեզներ)		
D5211	Վերին ծնոտի մասնակի պրոթեզ, խեժից հիմք	\$0
D5212	Ստորին ծնոտի մասնակի պրոթեզ, խեժից հիմք	\$0
D5213	Վերին ծնոտի մասնակի պրոթեզ՝ ձուլված մետաղե հիմնակմախք/խեժից հիմք	\$0
D5214	Ստորին ծնոտի մասնակի պրոթեզ՝ ձուլված մետաղե հիմնակմախք/ խեժից հիմք	\$0
D5421	Հարմարեցված մասնակի պրոթեզ, վերին ծնոտ	\$0
D5422	Հարմարեցված մասնակի պրոթեզ, ստորին ծնոտ	\$0
D5640	Կոտրված ատամի փոխարինում, յուրաքանչյուր ատամի համար	\$0
D5650	Առկա մասնակի պրոթեզին ատամի ավելացում	\$0
D5660	Առկա մասնակի պրոթեզին սեղմիչի ավելացում	\$0
D5740	Վերին ծնոտի մասնակի պրոթեզի կրկնաբազավորում, ատամնաբուժական այթոռում	\$0
D5741	Ստորին ծնոտի մասնակի պրոթեզի կրկնաբազավորում, ատամնաբուժական այթոռում	\$0

CDT Կոդ	Նկարագիր	Համավճար
ՖԻԶՍՎԱԾ ՊՐՈԹԵԶՎՎՈՐՈՒՄ (կամուրջներ)		
D6240	Ատամնային կամրջի մարմին, ճենապակի՝ միաձուլված բարձր ազնվության մետաղին	\$0*†
D6241	Ատամնային կամրջի մարմին, ճենապակի՝ միաձուլված հատուկ բազային մետաղին	\$0†
D6242	Ատամնային կամրջի մարմին, ճենապակի՝ միաձուլված ազնիվ մետաղին	\$0*†
D6750	Ատամնապսակ, ճենապակի՝ միաձուլված բարձր ազնվության մետաղին	\$0*†
D6751	Ատամնապսակ, ճենապակի՝ միաձուլված հատուկ բազային մետաղին	\$0†
D6752	Ատամնապսակ, ճենապակի՝ միաձուլված ազնիվ մետաղին	\$0*†
ՀԵՈԱՅՈՒՄՆԵՐ և ԲԵՐԱՆԻ ԽՈՌՈԶԻ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ		
D7310	Ատամնաբնի պլաստիկա (ծնոտի հարթեցում)՝ հեռացման հետ միասին, 4+ ատամ, քվադրանտ	\$0
D7311	Ատամնաբնի պլաստիկա՝ հեռացման հետ միասին, 1-3 ատամ, քվադրանտ	\$0
D7320	Ատամնաբնի պլաստիկա՝ առանց հեռացման, 4+ ատամ, քվադրանտ	\$0
D7321	Ատամնաբնի պլաստիկա՝ առանց հեռացման, 1-3 ատամ, քվադրանտ	\$0
D7910	Թարմ փոքր վերքերի կարում մինչև 5 սմ	\$0
ԼՐԱՅՈՒՑԻՉ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
D9310	Խորհրդատվություն, ոչ խնդրող ատամնաբույժից	\$0

***ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ.**

Եթե ապահովագրված նպաստը բարելավվում է ու ներառում է ազնիվ կամ բարձր ազնվության մետաղ, մատակարարը կարող է անդամին հաշիվ ներկայացնել լրացուցիչ լաբորատոր ծախսերի համար այդ բարելավված մետաղի համար:

Ճենսպակի/խեժ՝ միաձուլված մետաղյա ատամնապսակին մեծ աղորիք ատամի վրա համարվում է բարելավում: Եթե տրամադրվում է ճենսպակի/խեժ՝ միաձուլված մետաղյա ատամնապսակին մեծ աղորիք ատամի վրա, մատակարարը կարող է անդամին հաշիվ ներկայացնել լրացուցիչ լաբորատոր ծախսերի համար ճենսպակու/խեժի համար:

Ճենսպակի/խեժ՝ միաձուլված մետաղյա ատամնապսակին ապահովագրված նպաստներ են առջևի և փոքր աղորիք ատամների համար:

Ձույլերի հիմուկքով մետաղյա վերանորոգումներն ապահովագրված նպաստներ են մեծ աղորիք ատամների համար:

Թույլատրելի է ոչ ավել քան երկու (2) քվարտանս պերիոդոնտալ չափագծում և արմատի քերում մեկ ժամադրության համար/մեկ օրվա համար:

†ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ պոնտիկ և հենվող պսակների վերաբերյալ.

Ֆիքսված կամուրջներն ապահովագրվում են միայն ինչպես նկարագրված է ներքևում.

Առջևի ֆիքսված կամուրջն (ճենսպակի՝ միաձուլված հատուկ բազային մետաղին) ապահովագրվում է վերջերս հեռացված մինչև երկու առջևի ատամների համար, երբ՝

- Այդ հեռացված ատամները միակ պակասող ատամներն են կամարում (բացի 3-րդ մեծ աղորիք ատամներից), և
- Հեռացման վայր(եր)ին անմիջապես կպած ատամներն ունեն լավ կանխատեսում:

Առջևի ֆիքսված կամրջի համար համապատասխան ընթացակարգի կողերն են՝

- D6751: կցվող ապամնապսակ մեկ ատամի համար հեռացման վայրի կողքին
- D6241: փոխարինող ատամ (ատամնային կամրջի մարմին)
- D6751: կցվող ապամնապսակ մյուս կողմի ատամի համար հեռացման վայրի կողքին

Եթե ապահովագրված առջևի ֆիքսված կամուրջը բարելավվում է ու ներառում է ազնիվ կամ բարձր ազնվության մետաղ, մատակարարը կարող է անդամին հաշիվ ներկայացնել լրացուցիչ լաբորատոր ծախսերի համար այդ բարելավված մետաղի համար:

ՍԱՀՄԱՆԱՓՈՒՄՆԵՐ:

1. Բերանի խոռոչի զննումը ապահովագրված է վեց (6) անընդմեջ ամիսը մեկ անգամ:
2. Պերիոդոնտալ միջամտությունը ապահովագրված է վեց (6) անընդմեջ ամիսը մեկ անգամ:
3. Պսակները և արհեստական ատամները նպաստներ են համարվում միևնույն ատամի համար միայն յուրաքանչյուր հինգ (5) տարին մեկ և համապատասխանում են մասնագետների կողմից ընդունված ատամնաբուժական պրակտիկայի չափանիշներին:
4. Ընդհանուր կամ մասնակի պրոթեզի փոխարինումն ապահովագրված է յուրաքանչյուր կամարի համար մեկ անգամ հինգ (5) տարին մեկ, բացի այն դեպքերից, երբ դրանք հնարավոր չեն գործածական դարձնել փոփոխության կամ վերանորոգման միջոցով:
5. Պրոթեզների ձևափոխությունն ապահովագրված է տարեկան երկու (2) անգամ, և միայն երբ դրանք համապատասխանում են մասնագետների կողմից ընդունված ատամնաբուժական պրակտիկայի չափանիշներին:

ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

1. Ցանկացած բուժգործողություն, որն հատուկ նշված չէ ապահովագրված նպաստների ցանկում:
2. Կորցված կամ գողացված պրոթեզների կամ այլ մասերի, ներառյալ պսակների, կամուրջների, մասնակի արհեստական ատամնաշարերի և ամբողջական արհեստական ատամնաշարերի փոխարինում:
3. Ցանկացած բուժման ինսուրանք կամ մասնիկների պատրաստում, որոնք կամ անհրաժեշտ չեն բերանի խոռոչի առողջության պահպանման և բարելավման համար, կամ կոսմետիկական նպատակներով են, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ապահովագրված նպաստներ են:
4. Օրտոդոնտիկ բուժում:
5. Ընթացակարգեր, որոնք համարվում են փորձարարական, բուժումներ, որոնք ներառում են իմպլանտներ կամ դեղագործական ռեժիմ:
6. Բերանի խոռոչի վիրահատություն, որը պահանջում է ոսկրի ճեղքվածքի կամ հողախախտման գործողություններ:
7. Հոսպիտալացում:
8. Ընդհանուր ցավազրկում, անալգետիկ, ներերակային/ներմկանային ցավազրկում կամ անեսթեզիոլոգի ծառայություններ:
9. Բուժումներ, որոնք սկսվել են անդամի իրավունակությունից առաջ կամ իրավունակությունից հետո:
10. Ընթացակարգեր, որոնք համարվում են ատամնաբուժական տեսակետից ոչ անհրաժեշտ՝ ըստ ատամնաբուժական պրակտիկայի մասնագիտորեն ճանաչված ստանդարտների:
11. Սարքեր, որոնք անհրաժեշտ են ուղղաձիգ ծավալն ավելացնելու կամ օկկլյուզիան վերականգնելու համար:
12. Ընթացակարգեր, սարքեր կամ վերականգնումներ ուղղելու համար բնածին, զարգացման կամ բժշկականորեն դրոշմած ատամնաբուժական խանգարումներ, ներառյալ, սակայն առանց սահմանափակման՝ միոֆունկցիոնալ (օրինակ՝ խոսքի թերապիա), միոկմախբային կամ քունքա-ստորին ծնոտային հոդի խանգարումներ (օրինակ՝ դիմային ոսկորների փոփոխում/ուղղում):
13. Չարորակությունների, ցիստաների կամ նորագոյացությունների բուժում:
14. Նշանակված ատամնաբուժական գրասենյակից դուրս մատուցված ծառայություններ, եթե դրանք հստակորեն չեն հաստատվել LIBERTY Dental Plan-ի կողմից, կամ չեն նշված և ապահովագրված, որպես «Շտապ ապամնաբուժական ինսամբ» *Ձեր Անդամի տեղեկագրքում:*

Հարցեր բացառությունների և սահմանափակումների մասին

